Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար դյուրակիր համակարգչի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/14 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու որոշման վերաբերյալ

Հարգելի մասնակիցներ

Հայտնում ենք, որ eauction.armeps.am համակարգով մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել «Սի-Սի գրուպ» ՍՊԸ և «ՍԵԳ» ՍՊԸ կազմակերպությունները:

Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Սի-Սի գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

1. eauction.armeps.am համակարգում «Ապրանքային նշան», «Արտադրող» սյունակները լրացված չեն: «Տեխնիկական բնութագիր» դաշտում հստակեցնել «Անկյունագիծ՝ **առնվազն 13.3**», «Օպերատիվ հիշողություն (RAM) **առնվազն՝ 8 GB**», «Քեշ հիշողություն՝ **առնվազն 12 MB**», «SSD կուտակիչ՝ **առնվազն 256 GB**», «Հիշողության հաճախականություն՝ **առնվազն 3733 MHz**», «Մարտկոցի հզորություն՝ **առնվազն 49.9 Վտ-ժ**», «Չափսեր՝ **առնվազն 30.41 x 21.24 x 1.61 սմ**», «Քաշ՝ **առավելագույնը 1.5 կգ**» ձևակերպումները: Նույն դաշտում բացակայում է երաշխիքային ժամկետը և ապրանքի **նոր** կամ **օգտագործված** լինելու փաստը:

2. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: Համայնքը կարող է ընդգրկել մեկ կամ ավելի թվով բնակավայրեր: (...):»:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Երևան համայնքի վարչական շրջանների սահմանները որոշվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքով: (...):»:

Մասնակիցն «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում»՝ 4-րդ բաժնի 4.3 և 4.4 ենթաբաժինների համապատասխանաբար 4.3.3 և 4.4.3 կետերում լրացրել է «Արաբկիր» բառը, ուստի առաջարկում ենք «Արաբկիր» բառը փոխարինել «Երևան» բառով:

Միաժամանակ հայտնում ենք, որ Մասնակցի կողմից «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր»-ը լրացնելիս՝ 1.3 ենթաբաժնի 1.3.1 և 1.3.3 կետերում ամսաթվերը պետք է նույնը լինեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել՝ առաջարկելով Ընթացակարգի մասնակից՝ «Սի-Սի գրուպ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 24.02.2023թ. ժամը 11:45-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղար՝_____ Ռ. Հովհաննիսյան

22.02.2023թ.